



Արմենիա
Ինչորանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ Գլխավոր տնօրենի
«14» մայիսի 2026 թ. թիվ 174-26Լ հրամանով

«ԿԱՍԿՈ ՊԼՅՈՒՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

«ԿԱՍԿՈ Պլյուս» ապահովագրության պայմանագրով փոխհատուցվում են ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ) արդյունքում տուժող կողմ հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցին պատճառված գույքային վնասները, որոնք գերազանցում են ԱՊՊԱ կամ այլ ապահովագրության պայմանագրերով հատուցման ենթակա գումարի առավելագույն չափը:

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով ավտոտրանսպորտային միջոցի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Ապահովագրական հատուցման չափ

Հատուցումն իրականացվում է տուժող կողմի ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի մեծության և ԱՊՊԱ կամ այլ պայմանագրի գծով ստացած հատուցման տարբերության չափով՝ ապահովագրական ծածկույթի սահմաններում:

Ապահովագրական գումար և ապահովագրավճար

Ապահովագրավճարը տարբերակվում է՝ ելնելով ապահովագրական գումարի մեծությունից ու ապահովագրության ժամկետից, և հավասար է.

Ապահովագրական գումար, ՀՀ դրամ	Ապահովագրավճար, ՀՀ դրամ	
	10 օրից առ 6 ամիս (ներառյալ) ժամկետ	7 ամսից առ 1 տարի ժամկետ
1 500 000	4 000	7 000
2 500 000	6 000	10 000

Ոչ պայմանական չհատուցվող գումար

Չի կիրառվում

Ապահովագրավճարի վճարման կարգ

Միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին

Պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ

- Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր կամ հաշվառման հայտարարագիր,
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթեր,
- Իրավաբանական անձի դեպքում՝ պետ գրանցման վկայականը,
- Հետախոսահամար,
- Էլեկտրոնային փոստի հասցե:

Ապահովագրության կանոններ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի ««ԿԱՍԿՈ Պլյուս» ցամաքային ավտոտրանսպորտի կամավոր ապահովագրության կանոններ»